

նապէս կը տեսնուի թէ Եղիսարեթուպոլսեցիք ձոխացած են պղծէնածնութեան ամէն շնորհքներով, — պետք է որ ջանանք կ'ընեն, բոլոր ուժով՝ մեր առանձնաշնորհութիւնները պահելու եւ անոնց մէջ հաստատ մնալու: Սակագին (taxa) վճարելով այնպէս պիտի երեւայ, իբրեւ թէ մեր խնդրուածքին մինչեւ հիմակ անարժան էինք: Իսկ մէկալ առաջարկութեան նկատմամբ, թէ վճարքին տեղ յիսուն տարի 500ական ֆիորին վճարենք՝ մենք գտաւ, ու կերպցիք զատ՝ ընդունուելու բան չէ: Վասն զի ստիկայ մեր սերնդոյն ու ապագային համար պատուաւոր բան մը չէ: Աւելի յարմար կը տեսնենք, որ տրուելու գումարը միանգամով հատուցանենք: Մասդիկենք՝ մեզի հետ խորհուրդըստ առնեն, յայտնեց թէ դուք Բոլին հետ խոսելով, երբ իր օգնութիւնը խնդրեցիք, ըսած ըլլայ, որ կարգաց աղբնք զազգն ամենեւին պիտի չծանրաբեռնեն, հապա կայսերական հրամանագրին համեմատ, տէրութեան միայն գլխութիւնը պիտի խնդրեն: — Երկիրն, ինչ կերպով որ ալ ուզէ ազգայինները ծանրաբեռնել՝ հաստատութիւնը կայսեր կամեցող վրայ ըլլալով՝ թէ որ խոտաացուած նուէրը զատ յօգուածի մէջ չառնուի ու ընդգուծին իրրեւ չայցող մատուցուած մշտնջենական ծառայութիւն, ինչ որ ալ բարեհաճին կերպցիք խոտառնալ, թէ որ պէն բանը մեր ծանրաբեռնութեամբն ըլլայ, ամենեւին չենք ընդունիր. ու կը յայտնենք թէ պղծէնածնութեան համար վճարելի ստակն ամենեւին չենք տար, հապա կայսեր ոտքը կ'իջանք:

Ցերեկագորէս յայտնապէս կրնանք տեսնել, թէ կերպացող ու Եղիսարեթուպոլսեցեաց մէջ միութեան կապը քակուելու սկսաւ: Մէկին տեսութիւնը մէկալին տեսութիւնէն տարբեր ըլլալով՝ ընթացքին ալ, գործերէնին ալ տարբեր տարբեր սկսաւ ըլլալ:

(Հարսն-իւնի)

ՅՈՒՆ. ԱՆՅՈՒ



ԳՐԻԿՈՍԻՍԵՆԻ ՀԱՅՐԵՐ, ՆԵՐՍԵՍ ՈՆՇԵՆՈՒԼԸ,
ՆԵՐՍԻՍԵՆ ԵՒ ԱԳՈՒՅԵՆ

(Հարսն-իւնի)

Բ.

1453 թուին մայիսի 29ին մի սարափելի եւ շարագուշակ լուր գրողք համայն Եւրոպան Սուլթան Մեհմեդ Բ-ն առեւ էր Բիւլանդեան

կայսրութեան մայրաքաղաք՝ հռչակաւոր Կ.Պոլսը: Արեւելեան անբարոյականացած, կնստ եւ քծնող կայսրութիւնը զառամելով, վասնելով իր ջոճ շուպլութեան, զերկութեան եւ անառակ կենսի մէջ, չկարողացաւ դիմագրել Օսմանեան ցեղը զօրեղ ու թարմ յոժին. նա ընկաւ, տապալուեց եւ նրա աւերակները վրայ մահաւանդան աշխարհէ իր յաղթանակի դրօշը կանգնեցրեց: Այդ օրից քոքը Սիւն եւ Հայաստանը, որ միշտ իր աշխարհագրական դիրքի պատճառով զանազան աղբերկ պատերազմի եւ արշաւանքի թատերաբեմին է հանդիսացել, այլ եւս մի բողբ հանգստութիւն չգտաւ: Գեո Նոր էր առեւ Սուլթան Մեհմեդ Կ.Պոլսը եւ ահա Հայաստանի օսմաններում գլուխ բարձրացրին երկու հզօր Ամիրաներ: Առաջինը կոչուած էր Ջհանշահ, որ տիրապետել էր ամբողջ Պարսկահայքին — Արապական աշխարհին եւ Կործէքին, Սիւնեաց, Արցախի, Արարատի եւ զասպարակների երկրներին, եւ իր համար մայրաքաղաք էր շինել Գափլէճ քաղաքը. իսկ իր որդի Հասան-Ալուս փոխանորդ էր կարգել Դախիլեան քաղաքում: Հետզհետէ ընդարձակելով իր իշխանութիւնը, Ջհանշահ արշաւեց եւ Պարսկաստան կամ Իրաք-Աքմեդ, առաւ Շիրազ, Քիրման եւ վերապէս Սպահան մայրաքաղաքը, անցաւ Խորասան, գրուեց մինչեւ անգամ Սամարղանդ, նուաճեց այնտեղի Թաթարների կամ Թուրքմեններին եւ իրեն Պարսկաստանի թագաւոր հռչակելով, վերադարձաւ իր մայրաքաղաքը Գափլէճ: Երկրորդ ամիրան էր Ջհանգիր Սուլթան, որ տիրում էր Միջագետի եւ քոքը Ասիայի վրայ եւ նստում էր Գիւրբաքէր քաղաքում: Այսպիսով ամբողջ Հայաստանը զանաւոր էր այդ երկու ամիրաների կամ Օսմանցիների եւ Պարսից բռնակալութեան ներքոյ. եւ որովհետեւ այդ երկու պետութիւններն անզգաբար միմանց հետ կաւում էին եւ փոփոխակի յաղթող կամ յաղթեալ հանդիսանում, ուստի եւ թշուառ Հայաստանը մերթ ընկնում էր Օսմանցիների, մերթ Պարսից ձեռքը եւ շարունակ հեծում ու տառապում էր, երկու կերպի մէջ մնալով: Զահան Շահի մահից յետոյ, որ եղաւ 1465 թուին, նրա որդի՝ Հայուց մարդպան Հասան Ալույի եւ Ջհանգիր ամիրայի որդի՝ Բեգուն Հասանի մէջ պատերազմ ծագեց, եւ այս վերջինը յաղթելով առաւ Գափլէճ եւ տիրեց բոլոր Արապատականի, ինչպէս եւ Պարսկաստանի վրայ: Այնուհետեւ Պարսից եւ Օսմանցի մէջ շարունակ կուլ եւ լինում, փոփոխակի

յաջողութեամբ. եւ Արքայատեանն ու Հայաստանը զանազան անձանց եւ իշխանների իշխանութեան ներքոյ է ընկնում, մինչեւ որ, վերջապէս, 1491 թուին, Արդարիկ քաղաքի Շէյխ՝ Հայտարի որդի իսմայիլը զօրանալով, թափառորեց Պարսից վրայ, գրաւեց Գավրէժ եւ Արքայատեանը ու Արարատեան աշխարհը եւ 1500 թուին իր թէոզը հաստատելով Ասպահան քաղաքում, կոչուեց Էաճ իսմայիլ Սէֆերի, եւ այսպէս Սէֆերի հարստութեան հաստատողն եղաւ։ Այն օրից սկսուեց Ղալբաշների տիրապետութիւնը։

Էաճ իսմայիլի գէմ պատերազմ հրատարակեց Օսմանեան մեծ սուլթան Սէլիմ 1513 թուին. եւ յաջելով նրան՝ յետ առաւ Գավրէժ քաղաքը եւ այգանդի բոլոր արհեստագէտներին, մեծ մասամբ Հայերից, 3000 հայ ընտանիք, կոչեցրեց Կ.Պոլսի։ Այդ թուականից սկսած մինչեւ 1586 թիւը թշուառ Հայաստանը եւ երկիցս թշուառ հայ ազգը մի օր, մի ժամ, մի բուռէ հանգստութիւն չունեցաւ Պարսից եւ Օսմանցոյ արերի եւ կռուածի երեսից։ Սուլթան Սէլիմ Երկրորդ Հայաստանի մեծ մասի վրայ, սկսած Գավրէժ քաղաքից մինչեւ Կարին, բայց Էաճ իսմայիլի որդի Էաճ Թահմազը 1550 թուին յետ առաւ գրաւեց Վան քաղաքը, առաջապահեց Արարատեան աշխարհը, հասաւ մինչեւ Բարձր Հայք, աւերեց Եղբուսի երկրը մինչեւ Երզնկայ, եւ շատ Հայեր ի գերութիւն վարեց։ Բոլոր Հայաստանը հեծում էր այդ բռնակալի տիրապետութեան ներքոյ։ Նրա մահից յետոյ Օսմանցոյ սուլթան Մուրատը մեծ ջոյքով խաղաղ դարձեալ Հայաստան, յետ կորզեց բոլոր երկիրները, ինչպէս եւ Երեւան, Նախիջևան, Գավրէժ. եւ այդ վերջին տեղերից 60 հազար Հայ եւ Պարսիկ զերի վարեց Բաւնաստանի կողմերը։ Աւելի սարսափելի եւ աղէտալի եղաւ 1579ի պատերազմը, երբ Օսման փաշա զօրագետը ասպատակեց Աղուանից երկիրը՝ Շիրուան, առաւ Էամսիխ, Գանձակ, Պարսուռ, Չարաբերդ, խաչէն, Վարանդա, Գրիզակ գաւառները եւ քաղմամբիւ Հայերին սրով խոլեողեց։ Պարսից Էաճը՝ խուզարէնդ չգիմանալով՝ փախաւ Կորդասան եւ երբ թափառորեց 1586 թուին նրա որդի Աբասը, կամ Էաճաբաս Առաջինը, նա աճապարեց Օսմանցոյ Սուլթան Մուրատի հետ հաշտութիւն անել, պատանդ առալ։ Այդպիսով երկու տերութիւնների մէջ խաղաղութիւն հաստատուեց, գոնե առ ժամանակ, եւ այդ հաշտութեան

զօրութեամբ, բոլոր գրաւուած երկիրները մնացին Օսմանցոյ ձեռքում, այնպէս որ Հայաստան համարեա տարողւայէս ընկաւ Օսմանցոյ տիրապետութեան ներքոյ։

Այդ անգագար ասպատակութիւնները, պատերազմները սարսափելի կերպով աւերեցին երկիրը, եւ թափախ արեան հեղեղները ապականեցին նրան։ Աղուանից, Արցախի, Փայտակարանի եւ Արքայատեանի գաւառներում մահ տարածում ընկաւ 1579 թուին, որին յաջորդեց մի սարսափելի սով։ Այդ աղէտների երեսից բնակիչների մեծ մասը կոտորուեց։ Ահա ինչ եւ գրում ականատես Յովհան Եսայրեցի կոչուած Վարդապետը։

“Վայ պատժապարտին, զի մահուամբ եւ սրով եւ սովու կոտորեալ մարդկան, մարմինը նոցա տոյազ գաղանջ կերակուր եղին. եւ շուրջ վայրենացեալք արտաւայ շինի կենդանի մարդի եւս որոյնք, եւ զայլք ի ճանապարհի եւ ի շինամբիւր, ի տուն մտեալ զմարդիկ ի նշնին արտաւայ քարշէին եւ ուտէին. եւ ի սովորել նոցա ի նշն ի մէջ խաշանցն մահալ, զխաշարածան ուտէին, իսկ զխաշանցն ինչ ոչ մեղանշէին, իսկ զմիւր մահուամբ եւ սովու եւ սրով մեռելոցն եւ գերեւոյց բնաւ ոչ կամիմ ընդ թիւ բերել եւ ընդ գրով արկանել, բայց թէ զեմ գբարեղ եւ զմիւսն առակի ձեք արկից բոս գբարեց Գաւթի, որ առ Երուսաղէմաւ”։

Սովն այնքան սաստկացաւ որ մարդիկ՝ ծածուկ սպանում էին երեխաներին եւ նոցա միւր խաշելով լափում էին։

Մի ուրիշ ականատես պատմագիր — Թադէոս վարդապետ Մերաստացին հետեւեալ կերպով է նկարագրում Ղալբաշների գործած աւերումները։

“Ի լրանալ հաղարամեան թուականին մերոյ շարժեցաւ ի վերայ աշխարհիս Հայոց ազգ Ղալբաշի, մահրէլ եւ մայրէլ զմնացորդս Արամեանց։ Աղէտը գործող ֆատալ սոցա առաւել էր քան զլանկիտանաբայն, զքաւ կարծեմ թէ չիք տեսեալ ուրեք ի հոլանդացոյ։ Եղլին հանապաղ զամն ողջին յաւեր քաղաքաց եւ ի կողպուտաբնից եւ անուամբ հարկաց ի յետին տեսնկու թուին ածին զազգ մեր։ Ջմեպուրդ իւրեանց, զոր Եաճ կոչին, առաւել քան զսաստուած պաշտեն. այլ սա մեզ փաբուան եղեւ, եւ առաւել քան զՍենեբերժի եւ զԵրուսաղէմոսի, ոչ գիւղ ի թողլ՝ եւ ոչ քաղաք, զոր ոչ աղարտեաց. էր զե հրով տուրէր, եւ էր՝ զե քանդեալ ի հիմն հասուցաներ զշիրուածս ամրուցաց եւ աւանից, եւս առաւել զեկեղեցիս եւ զվանորայս, սպան եւ զբաղումս յերիցանց եւ ի կրօնաւորաց”։

Ահա այդ գրութեան մէջ էր Հայաստանը եւ Պարսկաստանի քաղաքական վիճակը այդպէս էր գասաւորուած, երբ թագաւորեց Էաճ

սրբաւ Մեծը: Այդ ժամանակ դեռ բուն Պարսկաստանում Հայ չկար: Հայերի մեծ մասը ամենահին ժամանակներից բնակւում էր Արար-պատականի աշխարհում, որի մայրաքաղաքի՝ Դավրիժի մէջ 7000 տուն Հայ կար: Հայերը այդ քաղաքում 12 անուանի եկեղեցիներ ունեին: Եւ այսօրուայ հռչակաւոր Հաղթած Սհարի մզկիթը ուրիշ բան չէ, եթէ ոչ Հայոց Ս. Յովհաննէս մայր եկեղեցին, որի սիւները դեռ կանգուն են, ինչպէս եւ սեղանը եւ աւազանը, որ Պարսիկները ծածկել են: Եկեղեցիների մի քանիսի տեղերը դեռ յայտնի են, օրինակ Ս. Աստուածածնի մատուռը, որ այժմ քաղաքից դուրս մի այգու մէջ է. Ս. Խաչի եկեղեցին, որի տեղը այսօր Աժ-Մէյդանի է կոչւում, այսինքն ձիերի վաճառանոց: Դավրիժից յետոյ ամրոցը Արարպատական գաւառը լին էր Հայերով, Հայ եկեղեցիներով, վանքերով. անուանի էին Սաւմաստ, Մարաղա, Խոյ, Աղզարիւ, Ումի, Գուխարզան քաղաքները եւայլն: Սաւմաստի եպիսկոպոսութիւնը կաթողիկոսութեան հաւասար դիրք ուներ:

Արարատեան աշխարհում, ի բաց տունայ Դաւիթբեանը, Համախին եւ Երեւանը, անուանի էր Ջուղայ աւանը կամ գիւղաքաղաքը, կամ ըստ օտար պատմագրների՝ Ջուլֆայ, Ջուլհամ, Երասխ գետի հիւսիսակողմում, Գողթան գաւառում: Ջուղայի ծագումը շատ հին է. Մովսէս Խորենացի (Գիրք Ա.) իր պատմութեան մէջ յիշում է թէ Տիգրան Երեւանգեան Հայոց թագաւորը 565 տարի Քրիստոսից առաջ, նա՝ որ յաղթեց Աթաշակին եւ ժամանակակից էր Կիւրոսին, գերի անելով Աթաշակի աիկնոջ Անուին, կանանց, պատանիներին եւ 10.000 հոգի բերաւ բնակեցրեց Գողթան գաւառում եղած գաւառներին եւ աւանների մէջ, որոց թւում յիշում է եւ Ջուղայ — «աւան առ եզերք գետոյն Երասխայ» (Խորեն. պատմ. Հայոց. Վնեւա. 1827, էջ 123):

Երկու ժամանակ Ջուղայի մասին պատմութեան մէջ ոչ մի ձայն չէ լսւում թէ նա որ եւ է դերձադացան լինի: Երեւի մինչեւ ժ. Ե. եւ ժ. Զ. գալը նա մնացել է իրեն մի հասարակ գիւղաքաղաք, բայց այդ ժամանակից յետոյ սկսւում է հռչակուել իրեն պաշտականական անուանի քաղաք եւ նրա բնակիչներն իրեն հարուստ եւ ժիր վաճառականներ «խօջա մակ-անունով, Տեսնենք ինչ տեսարան էր ներկայացնում նա: Ջուղան գետեղուած էր, ինչպէս եւ այսօր կարելի է տեսնել աւերակներից, մի

խոր ձորակի մէջ, կարմիր ժայռերի մի սարի զառիվայրի վրայ: Նրա աջ կողմով, ամբողջ երկարութեամբը հոսում է Երասխ գետը. սարի ժայռերը, որոնցով նա շրջապատուած է համարեայ երեք կողմից՝ քաղաքի երկու ժայռեւրումն եւս այնքան մտնեցած են Երասխին, որ կազմում են նեղ անցք եւ այդ անցքերի տեղը շինուած են մուգքերը, որոնք նոյն իսկ քնուած թիւինից զժուարմանցանելի եւ ամրոց լինելով՝ պահպանւում էին բերդերով եւ դարպասներով: Գլխաւոր մուտքը լինում էր արեւելեան դարպասով, երբ փոքր ինչ անցնում էին Երասխը կամրջով, առաջ այն հռչակաւոր հոյակապ պատմական կամրջով, որի մասին փոքր ինչ յետոյ կը խօսինք, իսկ յետոյ, այն է ժ. Ե. եւ ժ. Զ. դարերում, շարժական կամրջով: Այդ շարժական կամրջին հետեւեալ կերպով էր շինուած: Երասխի երկու ափերում կանգնած էին երկու մեծ շինութիւններ, որոնք քարվանսարայներ էին վաճառականների համար: Պարսկաստանից, Հնդկաստանից եկող կարաւաններն գալիս կանգ էին առնում գետի միւս ափում, քարվանսարայում, որի մէջ կային շատ օժեւաններ եւ շուքմարաններ. ամբողջ գետի վրայով, այն է գետի լայնութեամբ, երկու քարվանսարայների միջտեղ ձգուած էր մի երկաթէ հաստ շղթայ, որի միջոցով բանում էր նաւակը, ինչպէս գործադրւում է եւ այժմ: Երկու հաստ սիւններից, որ շինուած էին քարվանսարայների առաջ, կապուած էր այդ շղթան, որ ամեն երեկոյ կողպւում էր բանալիով եւ բանալին յանձնւում քաղաքապետին. այս զգուշութիւնը նրա համար էր, որ ոչ ոք, կամ անձանցով մտրդ չկարողանար յանկարծ կամ գիշերով մտնել քաղաքը: Այդ կերպով եկաւորները եւ ապրանքը տեղափոխւում էին Ջուղայի քարվանսարայը, որտեղից ուղարկւում էին Վրաստան, Եւրոպա, Ռուսաստան եւայլն: Քարվանսարայների եւ սիւնների տակերներից գետ կանգուն են այսօր: Այդպէս ամեն կողմից լաւ պատուպրծած էր Ջուղան. գլխաւոր դարպասի բերդի գլխին միշտ հսկում էր մի պահապան, իմաց էր տալիս՝ եթէ որ եւ է վտանգ էր սպառնում քաղաքին. խրաբանչիւր նոր եկող պետք է պահապանն յայտնէր իր անունը եւ միայն քաղաքապետի թոյլտուութեամբ կարող էր մտնել:

Ահա մի կողմից Երասխ գետով, միւս կողմից ժայռերով եւ սարերով շրջապատուած մի այսպիսի փոքր զառիվայրի վրայ պարփակուած էր Ջուղան. այդ տեղն ամբողջ փոքր եւ

նեղ է, որ շատ գժուար է հաւատալ թէ այդ-
տեղ 8000 տան կար, ինչպէս գրուած է,
աներն այնքան փոքր են, որ աւելի թուշուհի
բունների են նմանում, քան մարդկանց բնակա-
րանի: Տները երկյարկանի, շատ պարզ եւ կո-
պիտ ճարտարապետութեամբ շինուած են ոչ
միայն սափարակի վրայ, այլ նաեւ ժայռերի,
սարի լանջերի վրայ. եկեղեցիները նոյնպէս շատ
փոքր են, դռները այնքան փոքր, որ մանկու
համար պէտք է սողալ: Մի քանի աներ շինուած
են այնպիսի ժայռերի վրայ, որտեղ այնեանները
միայն կարող են ման գալ:

Հարդէն առաջարկ, որ այցելեց Ջուզան
1673 թ. Սպիրի 13ին, ուրեմն Ջուզայի աւե-
րուելոց 68 տարի յետոյ՝ իր պատմութեան
Բ. Հատորին մէջ (էջ 303, 1811) այսպէս է
խօսում:

«Երասիի եղբւո՛ւ գտնուած է Հին-Ջուզան
(որին աշխարհագիր Հաճի խալիֆան, կոչուած եւս.
Քեաթիր Չէլեբի՝ իր «Ջահ-Նամայ ԳՐԲԻՆ մէջ
Ջուզայի անունն է տալիս) աւերեալ քաղաք, որ
մի քանի հեղինակներ կարծում են լինել այն, որ
հնէրն կոչւած էին Ալբրամէն: Իրաւունք ունին Հին
կոչելու, որովհետեւ բարեբաւի աւերեալ եւ կոր-
ծանալ է: Այդպէս յայտն ոչինչ ճանաչել չէ
կարելի, բայց ի իր ունեցած մեծութիւնը. նա շի-
նուած էր մի վերան զաւիթայրի վրայ, գետի երկա-
րութեամբ եւ նրա եղբին: Մուղղբեր, որոնք բնա-
կանաբար գժուարանցանելի եւ աւեր են, պահ-
պանուած էին շատ բերդերով: Քաղաքն ուներ
4000 տուն, ինչպէս ասում են Հայերը, սակայն
աւերակներին նայելով կեօց աւելի չպէտք է
ունենար. աների մեծ մասն ծակեր եւ զանափոր-
ներ են, սարերի մէջ այրեր, աւելի յարմար հօտերի
քան թէ մարդկանց բնակարան լինելու: Եւ չեմ
կարծում որ աշխարհի մէջ Հին-Ջուզայից աւելի
անպաւառ եւ զգուշիկ տեղ լինի. այնտեղ չկայ ոչ
խոտ, ոչ ծառ. չշմարտեւ, չընկանեալով աւելի
բարեբեր եւ արգասաւոր միայրեր կան, բայց դար-
ձեալ ճամբարի են, որ նոյնից աւելի չոր եւ քարոտ
քաղաքի տեղ չէ կարող լինել: Իրա փոխարէն
անպրճ գեղեցիկ է, նմանելով երկար ամպիթեա-
տրին: Այժմ միայն 30 բնական կայ, բոլորն էլ
հայ: Հասարակաց Մեծն աւերեց Ջուզան եւ ամեն
ինչ որ արուեստն նպաստել էր նրան ամրացնելու»:

Ջուզան կառավարւում էր տնային կամ
նահապետական կառավարութեամբ, այն է նա-
հապետների կամ իշխանների ժողովով, որին
նախագահում էր քաղաքագլուխը: Հասարակ
աւերման ժամանակ Ջուզայի քաղաքագլուխն
էր անուանի խոջայ խաչիկը, որի գերեզմանը
գտնուած է Ջուզայի գերեզմանատան մէջ, այս-
պիսի տապանաքարով. «սուրբ խաչայ բարեխօս
է առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ»

խաւջայ խաչիկին որ ի Ռ. եւ Ն. Գ. Թրկիս հան-
գեաւ է Քրիստոս խաւջայ խաչիկին եւ կողակցին
Մարիամի, Սրանից երեւում է, որ խոջայ խա-
չիկն մահաճանուէր է հայկական 1053 թ. կամ
փրկչական 1604 թ. ուրեմն Ջուզայի գաղթա-
կանութիւնից մի քիչ առաջ:

Ջուզայի արեւմտեան ծայրում ընկած է
նրա հուշակաւոր գերեզմանատունը, որի կան-
գուն խաչքարերը այնպէս ուղիղ զծի վրայ
գտաւորուած են, որ հեռուից զոքրի գունդ ես
կարծում: Խաչքանիւր խաչքարի մեծ մասը
գետ անմաշ մնում է, ահա ինչ է գրում Քաշ-
բեքունին. «տապանաքարերի նկարները գեղեցի-
կաքանդակ խաչեր են, իսկ երկրորդականը պատ-
կերներ... արձանագրութիւնները վերաբերում
են 1031, 1042 եւ այլ հայկական թուական-
ներին: Բայց կան, ասում են 7—8 երրորդ դա-
րու տապանաքարեր, Աստղին թուանշանները,
ուրեմն արձանագրուած են նախ քան Հասար-
բասի գալուստը, որ արշաւեց Արարատեան
դաշտի վրայ 1604 փրկչական թուականին...»
(Փորձ, 1877, №. 1.)

Սախայն մեքը, որ այցելեցինք Ջուզան
1884 թուին՝ գտանքարձանագրութիւններ եւ
ՋԼԹ, ՋՀԲ, ՋՀԷ (999, 972, 977) կամ
1550, 1528, 1523 թուականների:

Ջուզայի բնակիչներն բոլորն էլ Հայ-Ղու-
ստուրչական էին, բայց, կային եւ կաթոլիկեայ
Հայեր, գետ այսօր կանգուն է մի փոքր կաթոլ-
ղիկեայ եկեղեցի եւ պսժման Ջուզայի բնակիչ-
ներն աւանդաբար ասում են, որ օտար կրօ-
նաւորներ եւս բնակւում են եղել Ջուզայում
եւ եղել են նոյնպէս օտարազգիներ, որովհետեւ
գերեզմանատան մէջ մեզ պատահեց կարդալ
եւ մի անգլիացի Լորդի տապանաքարը:

Հուշակաւոր Ամենափրկիչ եկեղեցին քա-
ղաքից բաւականին հեռու է, մի ժայռի գլխին
շինած:

(Հըր-ու-սի-ի-ի) Է. ԱՌԱՅՈՒՆՅԱՆ



Ի Ե Զ Ո Ւ Ս Բ Ո Ն Ս Ա Կ Ս Ն

ՅԻՓՈՒԴԻՑ ՀՈՅՑ ԳՆԻՓՈՐՐՈՐՐՈՐԸ

(Հըր-ու-սի-ի-ի-ի-ի)

ԳԻՐԱՆՈՒՆՆԵՐ. — Գործածական գերա-
նուններու ձեւերն են եւ, դաւ, ուլ, ին, իւ, փո-
լը, Գրե, Յրե, Էրեւը. — Էր-բ, Գիւլեւ, — Եւ-
թի, Եւլ, Եւլի, Գրեւ, Եւլի. — Եր, Եւլ, Եւլի,